ԸՆԴՈՒՆՎԵԼ Է
ԵՀՀ Ակադեմիական խորհրդի
2024-25 ուստարվա № 7 նիստում
25 օգոստոսի 2025 թ.

ADOPTED
by the YHU Academic Council
at Session No. 7 (2024-25) on 25 August 2025

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Ռեկտոր
_____ Ս. Լ. Հարությունյան
25 օգոստոսի 2025 թ.

APPROVED
Rector S. L. Harutyunyan
25 August 2025

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ● YEREVAN HAYBUSAK UNIVERSITY

Բաց գիտության հայեցակարգ ● Open Science Concept

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Բաց գիտությունը գիտական հետազոտությունների, տեղեկատվության և կրթական ռեսուրսների ստեղծման, տարածման և օգտագործման մոդել է, որն ուղղված է թափանցիկության, համագործակցության, մատչելիության և հանրային ներգրավվածության խթանմանը:

1.2. Երևանի «Հայբուսակ» համալսարանը (այսուհետ՝ ԵՀՀ), ձգտելով դառնալ ժամանակակից, նորարարական և հետազոտական հաստատություն, որդեգրում է բաց գիտության սկզբունքները՝ որպես ինստիտուցիոնալ զարգացման կարևոր ուղղություն: Բաց գիտության սկզբունքներն արտացոլված են նաև ԵՀՀ-ի արժեքներում (Վարքագծի կանոններ, R21):

1.3. Հայեցակարգը հիմնված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բաց գիտության մասին հանձնարարականի (2021), FAIR սկզբունքների, ESG 2015-ի, հետազոտությունների գնահատման մասին Սան Ֆրանցիսկոյի հռչակագրի (DORA) և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի վրա:

2. ԲԱՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

2.1. Բաց գիտությունը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները.

- **Բաց մատչելիություն (Open Access)**՝ գիտական հրապարակումների ազատ հասանելիություն
- **Բաց հետազոտական տվյալներ (Open Research Data)**՝ հետազոտական տվյալների հասանելիություն և վերաօգտագործելիություն
- **Բաց կոդով ծրագրեր (Open Source Software)**՝ հետազոտություններում օգտագործվող ծրագրերի բաց կոդով հասանելիություն
- **Բաց գրախոսություն (Open Peer Review)**՝ թափանցիկ փորձագիտական գնահատում
- **Քաղաքացիական գիտություն (Citizen Science)**՝ հասարակության ներգրավում գիտական գործընթացներում
- **Բաց կրթական ռեսուրսներ (Open Educational Resources)**՝ ուսումնական նյութերի հանրային հասանելիություն:

2.2. Այս բաղադրիչները նպաստում են գիտելիքի ազատ շրջանառությանը, գիտական արդյունքների բազմակի օգտագործմանը և գիտության նկատմամբ հանրային վստահության աճին:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1. Հայեցակարգի նպատակն է ձևավորել ԵՀՀ-ում բաց գիտության մշակույթ, որը կաջակցի.

- գիտելիքի տարածման թափանցիկ և հասանելի միջավայրի ստեղծմանը
- հետազոտությունների որակի բարձրացմանը
- ուսանողների, դասավանդողների և հետազոտողների ակտիվ մասնակցությանը բաց գիտության գործընթացներին
- ԵՀՀ-ի միջազգային ճանաչելիության և համագործակցային կարողությունների ընդլայնմանը
- հանրային ներգրավվածության և սոցիալական ազդեցության ամրապնդմանը:

1. GENERAL PROVISIONS

Open science is a model for creating, sharing, and using research, information, and educational resources that promotes transparency, collaboration, accessibility, and public engagement.

Yerevan Haybusak University (YHU), which aims to be a modern, innovative, research-based institution, adopts open science principles as an important direction for institutional development. Open science is also among YHU's values (Code of Ethics, R21).

The Concept is based on the UNESCO Recommendation on Open Science (2021), the FAIR principles, ESG 2015, the San Francisco Declaration on Research Assessment (DORA), and the RA Law on Protection of Personal Data.

2. COMPONENTS OF OPEN SCIENCE

Open science comprises the following main components:

- **Open access:** free access to scholarly publications
- **Open research data:** access to research data and the ability to reuse them
- **Open source software:** open access to the source code of software used in research
- **Open peer review:** transparent expert evaluation
- **Citizen science:** involving the public in research
- **Open educational resources:** public access to learning materials.

These components support the free circulation of knowledge, the repeated use of research results, and public trust in science.

3. OBJECTIVES

The Concept aims to build an open science culture at YHU that supports:

- a transparent and accessible environment for sharing knowledge
- higher research quality
- active participation of students, teachers, and researchers in open science
- YHU's international visibility and capacity for collaboration
- stronger public engagement and social impact.

4. ԱՐԺԵՔՆԵՐԸ

4.1. ԵՀՀ-ում բաց գիտությունը հիմնված է հետևյալ արժեքների վրա.

- **Թափանցիկություն**՝ հետազոտության բոլոր փուլերը բաց են և ստուգելի
- **Մատչելիություն**՝ գիտական ռեսուրսները հասանելի են օգտվողների լայն շրջանակի
- **Համագործակցություն**՝ խթանվում է միջհամալսարանական և միջգիտակարգային համագործակցությունը
- **Ներառականություն**՝ բաց գիտությունը ծառայում է բոլորին՝ անկախ տարիքից, սեռից, կրոնից, բնակության վայրից կամ նյութական հնարավորություններից
- **Պատասխանատվություն**՝ ազնիվ և էթիկապես պատշաճ վարքագիծն ամրապնդում է գիտության նկատմամբ հանրային վստահությունը:

4.2. Բացությունն իրականացվում է «այնքան բաց, որքան հնարավոր է, այնքան փակ, որքան անհրաժեշտ է» սկզբունքով՝ պահպանելով անձնական տվյալների, մտավոր սեփականության, անվտանգության և հետազոտական էթիկայի պահանջները:

5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. **Ինստիտուցիոնալ մեխանիզմներ**

- ԵՀՀ-ի թվային բաց պահոցի ստեղծում՝ թեզերի, հոդվածների և ուսումնական ռեսուրսների պահպանման և տարածման համար
- հետազոտական տվյալների կառավարման մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ տվյալների կառավարման պլաններ և FAIR սկզբունքներին համապատասխան պահպանում:

5.2. **Ուսուցում և կարողությունների զարգացում**

- բաց գիտության թեմաների ներառում կրթական ծրագրերում
- վերապատրաստման ծրագրեր ուսանողների, դասավանդողների և աշխատակիցների համար
- խորհրդատվական աջակցություն հետազոտական տվյալների բաց կառավարման համար:

5.3. **Հետազոտական պրակտիկա և գնահատում**

- բաց գիտության սկզբունքներին համապատասխան հետազոտությունների խրախուսում
- հետազոտությունների գնահատման պատասխանատու մոդելների կիրառում՝ DORA-ի և CoARA-ի սկզբունքներին համապատասխան, որոնցում բաց գիտության պրակտիկան ճանաչվում է:

5.4. **Հանրային ներգրավվածություն**

- ուսանողական քաղաքացիական գիտության ծրագրեր
- հանրային գիտաժողովներ, աշխատարաններ և նախագծեր
- համագործակցություն հասարակական կազմակերպությունների և համայնքների հետ:

6. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

6.1. Հայեցակարգն իրականացվում է Աղյուսակ 1-ում ներկայացված փուլերով:

7. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

7.1. Բաց գիտության առաջընթացի վերաբերյալ կազմվում է տարեկան հաշվետվություն:

7.2. Կարգավորումները վերանայվում են միջազգային չափանիշների հիման վրա:

7.3. Մասնակիցների կարծիքները և արձագանքները օգտագործվում են քաղաքականության բարելավման համար (ESG 1.9):

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Բաց գիտությունը ոչ միայն տեխնոլոգիական կամ գիտատեխնիկական մարտահրավեր է, այլև համալսարանական մշակույթի ռազմավարական վերափոխում: Որդեգրելով այս

4. VALUES

Open science at YHU rests on the following values:

- **Transparency:** every stage of research is open and verifiable
- **Accessibility:** research resources are available to a wide range of users
- **Collaboration:** YHU encourages inter-university and interdisciplinary cooperation
- **Inclusion:** open science serves everyone, regardless of age, sex, religion, place of residence, or financial means
- **Responsibility:** honest and ethical conduct strengthens public trust in science.

Openness follows the principle “as open as possible, as closed as necessary”, respecting personal data, intellectual property, security, and research ethics requirements.

5. LINES OF ACTION

Institutional mechanisms

- creating a YHU open digital repository to preserve and share theses, articles, and learning resources
- introducing research data management, including data management plans and storage in line with the FAIR principles.

Training and capacity building

- including open science topics in study programmes
- training for students, teachers, and staff
- advisory support for open management of research data.

Research practice and assessment

- encouraging research that follows open science principles
- applying responsible research assessment in line with DORA and CoARA, in which open science practice is recognized.

Public engagement

- student citizen science programmes
- public conferences, workshops, and projects
- cooperation with civil society organizations and communities.

6. IMPLEMENTATION STAGES

The Concept is implemented in the stages set out in Table 1.

7. MONITORING AND REVIEW

An annual report on progress in open science is prepared.

Arrangements are reviewed against international standards.

Participants’ views and feedback are used to improve the policy (ESG 1.9).

8. FINAL PROVISIONS

Open science is not only a technological or technical challenge but a strategic transformation of university culture. By

հայեցակարգը՝ ԵՀՀ-ն ընդգծում է թափանցիկ, պատասխանատու և ներգրավող գիտակրթական հաստատություն դառնալու իր հավակնությունը՝ համահունչ եվրոպական և միջազգային չափանիշներին:

adopting this Concept, YHU affirms its strive to be a transparent, responsible, and engaged institution of research and education, in line with European and international standards.

Աղյուսակ 1 ● Table 1. Իրականացման փուլերը ● Implementation stages

Փուլ ● Stage	Գործունեություն ● Activities
I. Իրազեկման բարձրացում *I. Awareness*	Տեղեկատվական արշավներ, սեմինարներ, բաց դռների օրեր *Information campaigns, seminars, open days*
II. Կառուցակարգային զարգացում *II. Structures*	Բաց գիտության քաղաքականության և կանոնակարգերի մշակում *Drafting open science policy and regulations*
III. Կրթական ներառում *III. Education*	Բաց գիտության ինտեգրում կրթական ծրագրերում *Integrating open science into study programmes*
IV. Տեխնիկական ենթակառուցվածք *IV. Technical infrastructure*	Թվային պահոցներ, տվյալների կառավարման հարթակներ *Digital repositories, data management platforms*
V. Խրախուսում *V. Incentives*	Խրախուսման համակարգ, ցուցանիշների մշակում, ակադեմիական ճանաչում *Incentive scheme, indicators, academic recognition*

Բնօրինակը	**Original**	R53_YHU-Open_Science.pdf (v1.0)
Ընդունվել է	**Adopted**	25.08.2025
Հասցե	**URL**	https://haybusak.am/dx/r/R53_YHU-Open_Science.pdf
Հաջորդ վերանայումը	**Next planned revision**	2028 թ. սեպտեմբեր ● September 2028